PRESS RELEASE

PR21/336

ԱՄՀ աշխատակազմը եզրափակում է «Պահուստային ծրագրի» շրջանակում չորրորդ և հինգերորդ ամփոփիչ ստուգումը և 2021թ. IV հոդվածի շուրջ խորհրդակցությունը Հայաստանի հետ

Անհապաղ հրապարակման համար

Առաքելության ավարտին կազմվող մամուլի հաղորդագրությունները ներառում են ԱՄՀ աշխատակազմի թիմերի հայտարարությունները, որոնք երկիր կատարած այցից հետո ներկայացնում են նախնական եզրահանգումները: Սույն հայտարարության մեջ արտահայտված են ԱՄՀ աշխատակազմի տեսակետները և պարտադիր չէ, որ ներկայացնեն ԱՄՀ Գործադիր խորհրդի տեսակետները: Սույն առաքելության նախնական եզրահանգումների հիման վրա աշխատակազմը կկազմի զեկույց, որը ղեկավարության կողմից հաստատվելու դեպքում կներկայացվի ԱՄՀ Գործադիր խորհրդին՝ քննարկման և որոշման կայացման համար:

- *ՀՆԱ-ի աճը 2021 թ. ակնկալվում է, որ կհասնի 5½ և 2022 թ.-ին 5¼ տոկոսի, իսկ գնաճը կանխատեսվում է, որ իր վերջին բարձրակետից 2022 թ.-ին կնվազի:*
- *Քաղաքականության առաջնահերթություններից են՝ պատվաստումների տեմպի ավելի արագացումը, մակրոտնտեսական կայունության պահպանումը և տնտեսական բարեփոխումների շարունակումը՝ ավելի բարձր, կանաչ և ներառող աճի խթանման համար:*

Վաշինգտոն, Կ.Շ. – Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) թիմը, Նեյթըն Փորթերի ղեկավարությամբ, 2021 թ. հոկտեմբերի 19-ից նոյեմբերի 12-ի ընթացքում 2021 թ. IV հոդվածի շուրջ խորհրդակցության, ինչպես նաև ԱՄՀ «Պահուստային ծրագրի» (SBA) օժանդակությամբ իրականացվող Հայաստանի տնտեսական ծրագրի համակցված չորրորդ և հինգերորդ ամփոփիչ ստուգումների մասով քննարկումներ է անց կացրել: Քննարկումների ավարտին պրն. Փորթերը հետևյալ հայտարարությունն է տարածել.

«Ուրախ ենք հայտարարել, որ ԱՄՀ թիմը եզրափակել է 2021 թ. հոդված IV-ի շուրջ խորհրդակցության մասով քննարկումները և աշխատակազմի մակարդակով համաձայնություն է ձեռք բերել Հայաստանի իշխանությունների հետ՝ եռամյա «Պահուստային ծրագրի» օժանդակությամբ իրականացվող նրանց տնտեսական բարեփոխումների շրջանակում չորրորդ և հինգերորդ ամփոփիչ ստուգումն

700 19th Street NW
Washington, DC 20431
USA

ավարտելու համար: Համաձայնությունը ենթակա է ԱՄՀ Գործադիր խորհրդի հաստատմանը, որի կողմից սույն ամփոփիչ ստուգման քննարկումը նախատեսվում է դեկտեմբերի կեսին: Խորհրդի նիստից հետո հասանելի կդառնա շուրջ 72.5 միլիոն դոլար (51.429 միլիոն հատուկ փոխառության իրավունք (ՀՓԻ)):

«2021 թ. առաջին կիսամյակում արձանագրվել է 5 տոկոս տնտեսական աճ՝ պայմանավորված արտաքին և ներքին բարձր պահաջարկով: ՍԳԻ տարեկան գնաճի տեմպը արագացել է՝ հոկտեմբերին կազմելով 9.1 տոկոս, պայմանավորված սպառման կտրուկ վերականգնմամբ, առաջարկի սահմանափակումներով, սննդամթերքի համաշխարհային և ներքին գնաճով և 2021 թ. սկզբի դրամի արժեզրկման ազդեցության փոխանցմամբ: 2021 թ. առաջին կիսամյակում բյուջեի դեֆիցիտը կրճատվեց՝ հավաքված բարձր եկամուտների և հրատապ ծախսերի աստիճանական նվազման շնորհիվ, որոնք օգնել էին մեղմել 2020 թվականին Հայաստանին հարված հասցրած զույգ ցնցումների ազդեցությունը: Բանկային համակարգի կապիտալի և իրացվելության բուֆերների բարձր մակարդակը պահպանվել է և ամրապնդվել է նաև արտաքին դիրքը՝ ընդ որում արժույթն անցած մի քանի ամիսներին արժևորվել է:

«Վերականգնումն ակնկալվում է, որ 2021 և 2022 թթ. կշարունակվի՝ ՀՆԱ-ի համապատասխանաբար 5½ և 5¼ տոկոս աճով: Թեև հիմնավոր բարեփոխումների պայմաններում հաջորդ տարի աճի տեմպի արագացումը կարող է ավելի մեծ լինել, աճի նվազման ռիսկերը ևս ավելացել են, այդ թվում՝ ՔՈՎԻԴ-19-ով վարակվածության շարունակվող չորրորդ ալիքի, աշխարհաքաղաքական լարվածության, արտաքին պահանջարկի տեմպի դանդաղման և համաշխարհային ֆինանսական շուկայում հնարավոր ավելի բարձր տատանողականության հետևանքով: Գնաճն ակնկալվում է, որ մինչ 2022 թ. կեսը կսկսի զսպվել՝ առաջարկից բխող և արտաքին ցնցումների ազդեցության չեզոքանալուն և դրամավարկային քաղաքականության վերջին գործողությունների լիարժեք ազդեցությանը զուգահեռ: ՀՀ կենտրոնական բանկը շարունակում է նպատակադրածից բարձր գնաճի և համաշխարհային անորոշ միջավայրի հետևանքով առաջացող մարտահրավերների նախաձեռնողական կառավարումը, և պետք է շարունակի պատրաստ լինել ըստ անհրաժեշտության իր դրամավարկային դիրքի ճշգրտմանը՝ միաժամանակ փոխարժեքին տալով ցնցումները կլանող լինելու հնարավորություն: 2022 թ. բյուջեի նախագծով կարճաժամկետ օժանդակությունը հավասարակշռվում է ավելի բարձր կապիտալ ծախսերի միջնաժամկետ կարիքների հետ, և այն համահունչ է Հայաստանի հարկաբյուջետային կանոններին և ժամանակի ընթացքում հարկաբյուջետային բուֆերները վերաստեղծելու անհրաժեշտությանը: Արտահանման և դրամական փոխանցումների բարձր մակարդակն ակնկալվում է, որ 2021 թ. կնվազեցնի ընթացիկ հաշվի պակասուրդը:

«Կարճաժամկետ հատվածից հետո էլ կարևոր է կայուն քաղաքականության և բարեփոխումների ջանքերի պահպանումը՝ ստեղծելով հարկաբյուջետային բուֆերներ և էլ ավելի ուժեղացնելով միջնաժամկետ կայունությունը, նվազեցնելով գնաճը՝ դեպի Կենտրոնական Բանկի 4 տոկոս թիրախը, երաշխավորելով

հարկաբյուջետային կայունությունը և ապահովելով կայուն, կանաչ և ներառական աճ: Այս առումով, մենք Կառավարության հնգամյա ծրագրի հետ շատ ընդհանուր նպատակներ ունենք, որոնք շեշտադրում են գիտելիքահենք, արտահանմանն ուղղված, ներդրումներով պայմանավորված աճի ռազմավարությանը հետամուտ լինելը՝ նպատակադրելով աղքատության կրճատումը և կենսամակարդակի բարձրացումը: Այս նպատակներին հասնելու համար կարևոր է կոնկրետ միջոցառումների ծրագրեր մշակել՝ հարակից արդյունավետության հիմնական ցուցանիշներով և ծախսային գնահատականներով, լիարժեք գործողության մեջ դնել հանրային ներդրումների կառավարման մասին վերջերս ընդունված որոշումը, ամբողջացնել ՊՄԳ գործառնական համակարգը, ամրապնդել հարկաբյուջետային ռիսկերի կառավարումը, հրապարակայնությունը և կառավարումը, բարելավել բիզնես միջավայրը՝ միաժամանակ եկամուտների ավելացման՝ տնտեսական աճին նպաստող հարկային քաղաքականության, ծախսերի առաջնահերթության սահմանման և ավելի բարձրորակ հանրային ներդրումների միջոցով հնարավորություններ ստեղծելով:

«ԱՄՀ թիմը շնորհակալություն է հայտնում Հայաստանի իշխանություններին, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի, զարգացման գործընկերների և դիվանագիտական համայնքի ներկայացուցիչներին՝ արգասաբեր քննարկումների և համագործակցության համար»: